18.09.23 - 20.09.23
10:30
Անցանց
Գրանցումը փակ է
☐

Պահպանել Google օրացույցում
ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետ, 524 լսարան

Ս.թ. սեպտեմբերի 18-ին՝ ժամը 10:30-ին, ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետում Կադիսի համալսարանի (Իսպանիա) հետ գործակցության շրջանակում կբացվի նոր՝ հայ-իսպանական կաբինետ (ԵԼՀ, 524 լսարան):

Միջոցառման շրջանակում սեպտեմբերի 18-20-ը ԵՊՀ-ում կհյուրընկալվեն Կադիսի համալսարանի միջազգայնացման գծով պրոռեկտոր Ռաֆայել Կաստանյեցան, լեզվական քաղաքականության վարչության տնօրեն Ֆրանսիսկո Խավիեր դե Կոսը, Արևելյան Եվրոպայի և Կետրոնական Ասիայի համագործակցության կենտրոնի տնօրեն Անդրես Սանտանան, որոնք նաև հանդես կգան դասախոսություններով:

Սեպտեմբերի 20-ին համալսարանում դասախոսություն կկարդա իսպանացի գրող Խոսե Տոնո Մարտինեսը:

Այցի հիմնական նպատակն է երկու համալսարանների միջև ակադեմիական, գիտական և մշակութային կապերի ամրապնդումը:

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am